

ամենէն շուտ կը դառնայ ութերորդը ,
անկէ ետքը իրարու ետևէ եօթներորդը
վեցերորդը և հինգերորդը . իսկ երրոր-
դը անանկ շարժմամբ կ'երթայ՝ որ կար-
ծես թէ չորրորդը կը պտըտցնէ , չոր-
րորդն ալ երրորդը , հինգերորդն ալ
երկրորդը : Իսկ ինքն իլը հարկին ծը-
նուըներուն վրայ կը պտըտի : Եւ անոր
ամէն մէկ շրջանին վրայ վերէն համ-
բարու մը կեցած մէկտեղ կը դառնայ՝
մէկ միակերպ ձայն մը ձգելով , բայց
ութէն ալ մէկտեղ մէկ միաբան ներ-
դաշնակութիւն մը կ'ըլլայ : Իսկ անդին
իրարմէ հաւասար հեռու մէյմէկ աթոռ

նստած են հարկին աղջիկները՝ Պար-
կայք , Ճերմակազգեստ , զլուխնին պը-
սակ , լ աքեսիս , լ լոթով և լ տրոպոս ,
և համբարուաց ներդաշնակութեանը
հետ կ'երգեն , լ աքեսիս՝ անցածը , լ լո-
թով՝ ներկայն , լ տրոպոս՝ գալիքը : Եւ
լ լոթով աջ ձեռքովը բռնած կը դարձը-
նէ իլին արտաքին շրջանակը՝ ժամ ընդ
մէջ , լ տրոպոս ձախովը նոյնպէս մէջին-
ները , լ աքեսիս ալ երկու ձեռքովն եր-
կուքին ալ կը դպչի փոխն ի փոխ , :

Կը շարունակուի :

ԲԱՆԱՍԵԴԱՌՈՒԹԻՒՆ

Տեր , ե՞րբ տեսցես .

ՈՂՄ .

Արդ զի մահացուք փակեալ ունին զաշս ,
Օ աշ՝ յորմէ աղէտք հայցեն ըզգորով ,
Եւ յայն լոկ բացեալ որ արհամարհ շահ ,
Լամ որ ոչ աղեայն ածիցէ վըրդով .

Արդ զի ատելի ցաւոցն արտասուք ,
Յորոց մըղձկելցն թեթեւանայ սիրտ՝
Որչափ յայլ ի սիրտ քամէ կամ ի ձեռս
Խառն յաղի վիժանսն յատակին ըզգիրտ .

Արդ զի կորուսեալ վիշտք ըզպատկառանս
Օ սր իթրու բախտին աղդեն պատարագ ,
Եւ որպէս ըզեռու ձախողակ հըմայս
Ո ըշտացեալքն ի ծաղը առնուն եւ յառակ .

Արդ զի հարկ է պինդ ունել ըզհառաչ
Ի սիրտն անդ հանգոյն ի շիշեալ հրաբուխ ,
Հարկ՝ որչափ հրատապ ցաւքն իցեն եւ վեր .
Արտասուացն որչափ անհատաբար ուխ .

Արդ զի եւ երկնից կորեաւ լոյս կապոյտ ,
Ուր սիրտն ըսփոփէր իթր յապառնեաց տես ,

Եւ տըխուր աչկունք յայս ամպոց գուպար
Ռկնիորին գոդ կորուսեալ եւ զքեզ,
Տէր, դու երբ տեսցես :

Տէր, յորոյ հրաման գայ այս մառախուղ,
Պատկեր ում ըզսիրտ կալեալ է թախիծ,
Եւ բուք վեր ի վայր հարեալ զանդ եւ զջուր՝
Ոտղու զսա պըղտոր, մահուամբ զայն ելից .

Որ գիտես քանի՛ քոյդ ակնարկութիւն
Ծածկիցէ այս ձիւն տանիս, արտավար,
Քանի՛ պաղիցին առուակը քաղցրահոս
Ծարոշնեկին ի սուգ եւ մարգաց դալար .

Որ մինչ հիւսիսյ ասես թէ “Ը ընչեա . . . ,
Կընքեալ է յոր գէմ, յոր մայրիս, յոր թուփ,
Քանի՛ վարդենեաց թափեսցէ բաժակ
Կամ ցընդէ փետուրս եւ ծաղկունս ի ծուփ .

Փետուրս՝ զոր հաւիկն յիւր եթող ի չուն,
Ուի մերս արդ զոփալ նա երգէ ի ջեր .
Ծաղկունս՝ որք խամրեալ, բայց յիւրեանց ի սերմն
Փըթեսցին դարձեալ, թոյր եւ բոյր յայեր .

Եյլ ի թօթափել եւ մեր սիրելեաց,
Որոց մեք սըրտին՝ մերոյս նոքա զարդ,
Յորոց առնուաք ըզջուր կամ զըստուեր,
Եւ ի մէնջ ի բաց անկան տարապարտ . . .

Երբ կապուտ յոգւոցըս խինդ եւ սփոփանք,
Ուեւք՝ յորոց թէթէւ սլացեալ տանէին,
Հայիմք շուրջ սիրոյն յայնքան աւերակս,
Եւ չիք որ խոստայ դարձ, կեանք վերըստին . . .

Տէր, զայս մեր եւեթ տեսանիցեն աչք,
Օի արտասուս ցանդ տրկցէն աղեկէզ.
Խակ ոյր այց գըթոյդ է առհաւատչեայ՝
Տէր, դու երբ տեսցես :

Ի խաթարեալն արտ մինչ դիտէ մըշակ՝
Բզգենու ըզյոյս ամուլն անդ երէզ.
Հանդոյն եւ ի մեր թէ նայիս աղէտ՝
Յակօսից վըշտաց խինդք բուսցին եւ մեզ.

Վհ, երբ, երբ տեսցես :